



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

նոյեմբերի 2018 թվականի №Ս

ք. Երևան

**«ՄԻՆԱ-ՄԱՅԱ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  
ՆԱԽԱԶԳՈՒՇԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2010 թվականի ապրիլի 28-ի №217Ս որոշմամբ «ՄԻՆԱ-ՄԱՅԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Եղեգնաձոր» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0352 լիցենզիան (այսուհետ՝ Լիցենզիա) տասնհինգ տարի գործողության ժամկետով,

բ) ՀՀ վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 5-ի №1177Ս որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից 2018 թվականի սեպտեմբերի 25-ին Կայանի գործունեության ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ տեղակայված 3 հիդրոագրեգատներից մեկը չի համապատասխանում Լիցենզիայում ամրագրված հիդրոագրեգատներին, ինչի վերաբերյալ Ընկերությունը նախապես չի տեղեկացրել Հանձնաժողովին, և նույն օրը նշված հանգամանքի վերաբերյալ կազմվել է արձանագրություն,

գ) Հանձնաժողովը 2018 թվականի հոկտեմբերի 15-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Լիցենզիայի պայմանների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում 2018 թվականի հոկտեմբերի 17-ի գրությամբ Ընկերությունն ընդունել է խախտումը՝ հայտնելով, որ Լիցենզիայում ամրագրված 3-րդ հիդրոագրեգատը (հիդրոտուրբին՝ ՇՀ-Հ-45, 420կՎտ հզորությամբ և գեներատոր՝ ԴԱԶՕ2-1664-6Ու1, 500կՎտ հզորությամբ) ժամանակավորապես չի գործում, Ընկերությունում առկա ֆինանսական խնդիրների պատճառով տևական ժամանակ գտնվում է անսարք վիճակում և հայցել է Հանձնաժողովի

ներողամտությունը՝ ժամանակին չտեղեկացնելու համար: Միննույն ժամանակ հայտնել է, որ ֆինանսական խնդիրները հաղթահարելուց հետո Ընկերությունը անհապաղ կիրականացնի նշված հիդրոագրեգատի վերանորոգման և վերականգնման աշխատանքները,

ե) Լիցենզիայի պայմանների 4.1. կետի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն իրականացնում է N1 հավելվածում նշված հիմնական սարքավորումներով, որոնց դրվածքային հզորությունը կազմում է 1620կՎտ,

զ) Լիցենզիայի պայմանների 5.1. կետով Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից լիցենզավորված անձին իրավունք է տրվում իրականացնել էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրություն, փոխակերպում (տրանսֆորմացիա), առաքում (վաճառք) և դրանց իրականացման համար անհրաժեշտ էներգատեղակայանքների շահագործում՝ Լիցենզիայի պայմաններին համապատասխան,

ե) Լիցենզիայի պայմանների 6.21. կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է անմիջապես Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների,

ը) վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը լիցենզավորված գործունեությունը չի իրականացրել Լիցենզիայի պայմանների հավելվածում նշված սարքավորումներով՝ Լիցենզիայում ամրագրված 3-րդ հիդրոագրեգատի փոխարեն տեղակայելով նոր հիդրոագրեգատը, ինչի մասին չի հայտնել Հանձնաժողովին՝ խախտելով Լիցենզիայի պայմանների 4.1., 5.1. և 6.21. կետերը: Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված հիմնավորմանն առ այն, որ Լիցենզիայում ամրագրված 3-րդ հիդրոագրեգատի վերանորոգումը ձգձգվում է Ընկերությունում առկա ֆինանսական խնդիրների պատճառով, այն որևէ կերպ չի կարող ազատել Ընկերությանը լիցենզավորված գործունեությունը Լիցենզիայի պայմաններով ամրագրված սարքավորումներով իրականացնելու և դրանց փոփոխման պարագայում անմիջապես Հանձնաժողովին տեղեկացնելու պարտավորությունից, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, 30-րդ հոդվածի 1-ին կետը, 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Լիցենզիայի պայմանների 4.1., 5.1. և 6.21. կետերի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝

- 1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից Ընկերության գործունեությունը համապատասխանեցնել Լիցենզիայի պայմաններին.
- 2) ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

**Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան  
նոյեմբերի 2018թ.